ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Ալիսա Թանյան, Մակրոտնտեսական քաղաքականության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի ավագ մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիա, ք. Վիեննա, 2024 թվականի սեպտեմբերի 2-ից 13-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն/ Fiscal Policy Analysis (FPA)» թեմայով դասընթացին, որի շրջանակներում ներկայացվել են մակրոտնտեսական ցուցանիշների վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունները:

Դասընթացը միտված է մակրոտնտեսական կայունության և կայուն երկարաժամկետ աճ ապահովող հարկաբյուջետային քաղաքականության վերլուծության ուսումնասիրությանը՝ առաջադրված հայեցակարգերի և մեթոդների միջոցով:

5. Քննարկված թեմաները՝

1. *Հարկաբյուջետային քաղաքականության դերը.* տնտեսական արդյունքների և հարկաբյուջետային քաղաքականության վերջին միտումները,
2. *Հարկաբյուջետային ցուցանիշների վերլուծություն.* հարկաբյուջետային դիրք, ազդակ, բազմարկիչ,
3. *Ծախսային քաղաքականություն.* պետական ներդրումներ և տնտեսական զարգացումներ,
4. *Հարկաբյուջետային կայունություն.* կայուն տնտեսական աճ, մակրոտնտեսական շոկերի ազդեցության գնահատումը դեֆիցիտի վրա, պարտքի դինամիկա և կայունություն,
5. *Հարկաբյուջետային քաղաքականությունը և ներառականությունը.* ներառական աճ,
6. *Գենդերային անհավասարությունը և հարկաբյուջետային քաղաքականությունը.* գենդերային բյուջետավորում.

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի շրջանակներում նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են քննարկումներով և գործնական կիրառություններով՝ հնարավորություն տալով ավելի խորը

ուսումնասիրել հարկաբյուջետային քաղաքականությունը և դրա ազդեցությունը մակրոտնտեսական միջավայրի վրա:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

19 սեպտեմբեր, 2024թ.